նայել նրա վրայ: Նա այլեւս չէր խօսում, ես լսում էի նրա խուլ հեկեկանքը միայն:

— Օգնեցէ՛ք, պարոն բժշկապետ... — դարձեալ կրկնեց նա, — դեռ ուշ չէ... կարելի է օգնել... ինչո՞ւ չէք վեր կենում... ահա այնտեղ է... շատ հեռու չէ...

Ես մտածեցի, թէ իրաւ, դրսում մի որեւիցէ դժբախտութիւն պէտք է պատահած լինի, եւ շտապեցի օգնութեան հասնել: Բայց նա պինդ բռնեց իմ թեւքից եւ, սրահի յատակը ցոյց տալով ասաց.

— Նայեցէ՛ք, պարոն բժշկապետ, ահա՛ արեան շիթերը... դեռ չեն ցամաքել... Տեսնո՞ւմ էք, պարոն բժշկապետ, ես տեսնում եմ, ահա՛, նայեցեք...

Այժմ միայն հասկացայ, որ խեղճ կինը ցնորքների մէջ էր գտնւում: Ինձ նորից տիրեց մի անբացատրելի սարսափ, մանաւանդ երբ նա կանգնեց եւ, ձեռքը դէպի սենեակի դուռը մեկնելով, ասաց.

— Այդ արեան շիթերը, այդ դռնից սկսելով, գնում են մինչեւ ծովեզրը... Գիշեր էր, երբ գազանը այդ դռնից դուրս բերեց արիւնաշաղախ մարմինը, որ դրած էր մազէ խարարի մէջ... Արիւնը կաթկթում էր խարարից... Ես վազեցի նրա ետեւից, բայց նա շտապեց եւ շուտով հասաւ ծովեզրը... դրեց խարարը իր նաւակի մէջ եւ սկսեց թիավարել...

Այդ միջոցին անբախտ կնոջ ձայնը խեղդոեցաւ եւ չկարողացաւ շարունակել: Նա ձեռքը տարաւ դէպի աչքերը, որ արտասուքը սրբէ, բայց աչքերում արտասուք չկար: Ես ապշած կերպով նայում էի նրա վրայ: Երեւում էր, որ այդ տան մէջ կատարոել էր մի սարսափելի եղեռնագործութիւն, որի հետ կապած է եղել խեղճ կնոջ դժբախտութիւնը: Նա կրկին մօտեցաւ եւ նստեց իմ կշտին: Այժմ աւելի սրտաշարժ ձայնով ասաց ինձ.

— Ես կը պատմեմ ձեզ բոլորը... դուք պէտք է գիտենաք բոլորը, պարոն բժշկապետ... մինչեւ չգիտենաք, չէք կարող բժշկել ինձ... Լսո՞ւմ էք, պարոն բժշկապետ...

— Լսում եմ, — պատասխանեցի ես մեքենաբար:

Նա շարունակեց.

— Այն օրից անցել են շատ տարիներ... ես շատ անգամ գիշերը գնում եմ ծովեզրը, կանգնում եմ այնտեղ, կանչում եմ, երկար կանչում եմ, նա իմ ձայնը լսում է եւ յանկարծ յայտնւում է ալիքների միջից... Հիմա, այս րոպէիս, այնտեղից եմ գալիս, դարձեալ տեսայ նրան,դարձեալ համբուրեցի նրան... Նա ամենեւին չէր փոխոել, էլի այնպէս էր, որպէս վերջին անգամ, երբ այդ տանից խաւարի մէջ դուրս տարաւ նրան գազանը... վերքից տաք արիւնը դեռ հոսում էր... նոաղած աչքերով նայում էր իմ երեսին...